

ՌՈՍՍԻՆԻ

ԱՌԱՋԻՆ ԶԱՐԻՐՐԱՄԵԿԻՆ ԱՌԹԻՐ

ՔՏԱԼԱԿԱՆ երաժշտութեան ճանդէն կոչուեցաւ. բայց կարծեմ թէ լաւագոյն է Արիոսոգօ կոչել զնա. բեղուն միտք և գիւրութիւն, ուրախ զուարթ բնաւորութիւն, գրեթէ ակամայ և անփոյթ ծաղրաբանութիւնն՝ ամէնն ալ այն գերազանց հանճարոյն յատկութիւնքն են՝ զոր իւր հայրն իսկ կը կոչէր փափա Ռոսսինի (Papà Rossini), որ և կէս դարու ժամանակամիջոցէն աւելի՛ տիրեց իշխանաբար աշխարհիս տեսարանաց վրայ:

Ինչպէս երբեմն ՚ի Յունաստան երկուց դարուց պատմութեան շրջանին մէջ՝ կարծես յանկարծակի գեղարուեստական բոլորովին նոր աշխարհ մը ստեղծուեցաւ, որ և մարդկային մտաց արգասաւորութեան ամենագերազանց և զարմանահարալ ապացոյցն եղաւ. այսպէս նաև Ռոսսինի որ ծնած էր 1792 Փետրուարի 29ին ՚ի Փէզարօ, և հայր ունեցեր էր թափառիկ փողահար մը, և 1865ին իւր Բարիզու գահէն կ'իմանար թէ երաժշտական աշխարհն՝ իւր ծննդավայրէն զինքը գեղարուեստին գագաթնակէտն հասած կը հռչակէր՝ իւր կենաց միայն քսան և մի տարուան ընթացից մէջ պարզեց իւր զարմանալի հանճարը. ընդերզաճն փիւսկոյն տ' Ալմոնիա (Ողբ Ներդայնակութեան) որ տասնուվեց տարուան հասակին մէջ (1808) շարագրեց, և ընդ Գոչիլիէնու թէլ զոր յօրինեց 1829ին երեսուն և եօթն տարուան՝ Ռոսսինի բնութեան և արուեստին առ ինքն ներշնչած ամէն գողտրիկ զգացումներն յայտնեց հասարակաց, թատերական իւր առաջին և վերջին աշխատութեան մէջ՝ բաց յայտոց, հետևեալ գեղեցիկ և գերազանց խաղաղիկներն ՚ի լոյս բերաւ ՚ի իրաշխևա ին Ալմէրի, ի թոշրքո ին իրալիա, Պարպիերէ, Օրէլլո, Չէնէրէնթուրա, Կաճճա լատրա, Մոզի, Չէլմիրա, Աստետիօ տի Գորիկո, Սէմիրամիտէ: Մեր ծերերը մոռցուած գեռ ուրիշ երկրորդական թատերախաղերէն տողեր կ'երգէին՝ զորս ինքն իսկ Ռոսսինի մոռացեր էր, և կամ միւս յաջողագոյն գործոց մէջ կերպարանափոխեր էր. սակայն այս մոռացօնք այնքան բազմաթիւ են՝ որ եթէ ներկայիս խոհեմ և ուշիմ երաժիշտ մը հաւաքէ՝ գեռ այնչափ գեղեցիկ նետուած մարգրիտներ կը գտնէ՝ որ միայն անոնցմով շքեղ մանեակ մը կրնայ կազմել:

Ներկայ ժամանակս՝ փառաց և համբաւոյ մկրտութիւնը շատ դիւրին է յերաժշտութեան. և բաւական է որ երսուն տարեկան երգահան մը փոքրիկ աշխատութիւն մը հրատարակէ՝ իսկոյն կանխահաս հանճար մը կը համարուի և կ'ըմայիցընէ զամբոխն: Բայց այժմ ոչ ոք կը համարձակի սոսկ տասուիրեք օրուան մէջ գրել Պարսպիտի անգուգական և վսեմ՝ երաժշտութիւնը. և կամ ջերմամբ յանկողին ինկած՝ մի ևեթ գիշերուան մէջ շարադրել Մոզէի հրաշալի խմբերգին նման կտոր մը. ի Ռոսսինի ամենայն ինչ ներշնչումն էր և բնածին տաղանդ. երբ կարծեց թէ ներդաշնակութեան և երաժշտութեան գերազանց կէտին հասաւ՝ թողուց ամէն բան և ըրածին հաւնելով՝ հանգեաւ այնուհետեւ. փափագեցաւ այլ ևս անվրդով բարօրութեամբ իւր փառաւոր գործոց արդիւնքը վայելիլ:

Քանի մը ամիս յառաջ՝ բովանդակ աշխարհ նախ տօնեց Մոզարի զարադարձը, որ մեծապէս պարտական պէտք էր համարէր ինքզինքը իտալական երաժշտութեան. և ոյժմ՝ ահա Ռոսսինիինն ալ կը տօնուի մասնաւորապէս իտալիոյ ամէն քաղաքացի մէջ. սա փոխանակ շորհակալ ըլլալու Մոնելո Դէզիի՝ որ յետոյ Տոնիժէդիի և Փաչինիի ալ ուսուցիչ եղաւ՝ կը խոստովանի թէ իւր եզակեանութիւնն, աշխոյժ և խանդն՝ Մոզարէն սորվեցաւ. բայց թէ մին և թէ միւսն ամենէն աւելի, բնութեան, ժողովրդեան և մտաց ձայնին անսոցին. սոքա ամենամեծ արթնութեամբ ունկնդիր եղան ժողովրդեան արտասուաց և ջընծութեան և ահա այս կերպով միայն կրցան թրթռացընել իրենց երաժշտական մեծ քնարին ամէն թելերը. Հելուետիացի անդէորդաց երգն ի Գոչիէլոնս թէ՛՛ եղաւ Ռոսսինիի անմահ հովուականը: Եկեղեցական լուրջ և ծանր երգեցողութիւնը չե՛նք լսեր միթէ Մովսիսի վսեմ խմբերգութեան մէջ. իսկ Սքապարը՝ շարունակեալ ողբ և կոծումն է. ամէն սիրողաց սիրտը կը փղձկէ Օթէլլոյի գողար վէպերգն (romanza). մեծ Երաժշտագետն այսչափ տարի է որ իջեր է 'ի հող, և սակայն ցարդ կը դանդաղին մատուցանել իւր շիրմին որոշեալ պատիւն և մահարձանն. բայց Ռոսսինեան երգոց ներդաշնակ ալիք՝ կը ծփան և կը տատանին յաւէժաբար ընդ բովանդակ աշխարհ, իբրև ձայնալից լուսոյ խուրձ մը և իտալական հանճարոյն նոր և փառաւոր յաղթանակ մը:

* *

Հուլիակաւոր քննադատն Պիանճի՝ վոլֆանկ Մոզարի վրայ վերջերս հրատարակած հմտալից ուսումնասիրութեան մէջ՝ գեղեւ.

ցիկ կերպով նորոգեր է Ռոսսիինի ունեցած և առած դարձած համարումն Պէդովէնի վրայ. ուստի կը պատմուի՝ թէ երբ որ մը Պարպիէրի հեղինակին հարցուցին թէ ով էր ըստ իրեն կարծեաց ամենէն հոշակաւոր երաժշտապետն, իսկոյն պատասխանած ըլլայ.

— Ամենէն մեծ հեղինակն է Պէդովէն.

Եւ որովհետև 'ի մերձակայից ոմանք զարմացան թէ ի՞նչ պատճառաւ զՄոզար չի նախադասեր, պատասխանեց Ռոսսիինի.

— Մոզար պէտք չէ բաղդատել. նա եզական է, միակ է.

Մտերս ուսուցիչն Յովսէփ Մածձաթինթի անտիպ նամակաց և յիշատակարանաց շատ հետաքրքրաշարժ հաւաքածու մը պիտի հրատարակէ. 'ի շարս թղթոցն կայ նաև Ռոսսիինի մի նամակն, ուղղեալ առ Լէոքուտ Ջիկոնիարա, որ ժամանակին երաժշտական հանգամանաց վրայ իւր կարծիքը խնդրեր էր. թըւականն է 1817 փետրուար 12. այս նամակին մէջ՝ Ռոսսիինի յետ ըսելու Հայտընի համար թէ խանգարեց ճաշակին մաքրութիւնն և պարզութիւնն, «իւր շարադրութեանց մէջ տարօրինակ ներդաշնակութիւններ, արուեստական անցքեր և յանդուգն նորութիւններ մտցընելով», կը յաւելու թէ «իրմէ ետքը Քրամէր, և հուսկ ուրեմն Պէդովէն իրենց անբնական, անմիաբան, օտարոտի, խորթ և քմահաճոյ շարադրութեամբք՝ գործիական երաժշտութեան ճաշակը բոլորովին ապականեցին»։ Սակայն նոյն թղթոցն մէջ քիչ վերջը կը մեղմացընէ իւր այս խիստ լեզուն այսպէս. «մի և նոյն ժամանակ Մայէր՝ Սարգիի, Փաիզիեյլլի, և Ջիմարոզայի պարզ և վսեմ՝ ոճին տեղ՝ իւր հնարագիւտ այլ պակասաւոր ներդաշնակութիւնքն փոխանակեց 'ի թատրոնի, յորս գլխաւոր կամ՝ էական երգն կը խափանուի ընկերակցող գործեաց աղմուկէն. և այս նորելուկ գերմանական դպրոցին կը հետևին թատրոնի ամէն երիտասարդ երաժիշտները»։ Առ Ջիկոնիարա նամակն այսպէս կը վերջացընէ. «Կը խոստովանիմ թէ շատ քիչ յոյս ունիմ և չեմ կրնար հաւատալ որ այս աստուածավայել արուեստը՝ իւր արդի խեղճ դիրքէն ելնէ և կանգնի, առանց ընկերային սկզբանց հիմնական փոփոխութեան. և ահա ինչպէս կը տեսնես՝ դարմանն իսկ իրական և ներկայ շարիքէն շարագոյն է»։

1817ին այսպէս կը մտածէր. իսկ տարի մը վերջը գրեց Պարպիէրը, Օթէլլոն և հրաշալի Մոզէն, զոր հոռովէական ոչտութիւնը մերժեց ներկայացընել իւր Արձեկիկնա թատրոնին մէջ՝ 'ի յիշատակ Մեծին հարիւրամեկին.

'Իեռ փեղարեցւոյն համար չէր ժամանած այն յամառեալ և

կամաւոր լուծեան ժամանակը՝ որ դեռ տասուերկու տարի վերջը պիտի հանդիպէր Գոռչիէլն թէյի տիտանեան յղացումէն ետքը. վառեալ բորբոքեալ բոլորովին, երիտասարդական աշխոյժ և կորովի ներշնչմամբ՝ իւր մտաց մէջ կը շողար և կը փայլէր ազգային երաժշտութեան մը գաղափարը. այնպիսի երաժշտութեան մը՝ որ արդէն սկսեր էր խոնարհիլ, զի երիտասարդ հանճարներն օտարին նմանելու կը հետևէին:

Կ'ըսեն թէ երբ վակնէրի թրանճայգէր նուագախաղին ազմը կալից ներկայացումը տեղի կ'ունենար 'ի Բարիզ՝ Ռոսսինի դաշնակին առջև նստած՝ նորա անյաջող մասերը կը փորձէր. մերձակայ բարեկամ մ'ալ զարմանալով երբ ազդարարեց իրեն թէ գրակալին վրայ գլխիվայր դրեր էր երաժշտութեան թերթերը՝ Ռոսսինի զարմանք ձևացընելով պատասխանեց.

— Յիրաւի, շատ զարմանալի բան. ամենևին ուշադիր չէի եղած. բայց սա այնպիսի երաժշտութիւն մ'է՛ որ եթէ գլխիվայր ալ զարնես՝ նոյն նշանակութիւնն ունի. նոյնպէս ամենևին բան չի հասկըցուիր:

Թերևս շինծու քլայ այս պատմութիւնը՝ սակայն ճշմարտութենէ ալ շատ հեռի չէ. Յովակիմ Ռոսսինի յանիրաւի ամբաստանուեր է իբրև հայրենատեաց. այնպիսի ջերմ եռանդեամբ կը սիրէր և կը յարգէր իտալական արուեստը՝ որ և ոչ ծերութիւնը կրցաւ այս փափագը շիջուցանել, և ոչ այն ոլիմպեան և ծաղրախօս անտարբերութիւնն՝ որով շատ անձանց և իրաց վրայ կը զուարճանար կատակաբանութեամբ: Վոլֆանկ կէթէի նրման, որոյ արտաքին կերպով քիչ մը կը նմանէր, Ռոսսինի ալ իւր անձնական մեծութեան գաղափարն այնպէս լիուլի և ճշգրտիտ ունէր՝ որ միջին հասակով մարդիկ՝ ստէպ իր այաց գաճաճ կը թուէին. և անոնց բարկութեան և արհամարհանաց կ'ընդդիմանար իւր կծու և խայթող ծաղրաբանութեամբ. յորմէ ոչ որ կրցաւ ազատիլ և ոչ իսկ թագաւորք: Չեմ գիտեր թէ այս թագազարդից մէջէն որ դժբաղդը, որ միանգամայն սաստիկ սիրահար էր երգեցողութեան, անխոհեմաբար Ռոսսինիի մէկ նուագախաղին վէպերգն իւր իսկ առջև շարադրեց. այնքան ըզգալի եղան տարաձայնութիւնք՝ որ ինքն իսկ երգիչն անդրադառնալով՝ թողութիւն ինդրեց հեղինակէն. այն ատեն Ռոսսինիի դէմքն յարգալից ծանրութիւն մ'առնելով՝ խորին խոնարհութեամբ պատասխանեց.

— Չեմ ժխտեր, տարաձայնեցիր (stonare). բայց Չեր վեհափառութիւնն իրաւունք ունէր այնպէս ընելու:

* *

ի Բարիզ օր մը Ռոսսինիի իմացուցին փորդուգալի Լուգու վիկոս թագաւորին այցելութիւնն, որ տաղանդաւոր երաժիշտ և չափաւոր ստորնարամբ զարնող էր. թագաւորը շատ փափազելով ինքզինքը լսելի ընել տալ Գոչիէյմ Թէլի հեղինակին՝ նախասնեկին մէջ թողուցեր էր գործիքը. Ռոսսինի զայս իմանալով խըրախուսեց իւր նշանաւոր հիւրը: Գրեթէ քառորդ մը՝ ողբեր, մեղեդիներ, ականջ խայթող անցքեր ածեց գործիքին վրայ. երբ լմացուց՝ Ռոսսինի հանդարտութեամբ և 'ի նշան հաւանութեան գլուխը շարժելով՝ հետեւալ խօսքերն ըսաւ. « Կ'ելնէք կ'իջնէք առանց մէկուն հարցընելու... թագաւորի մը համար շատ պատշաճ է »:

Թագաւորն ըմբռնեց խօսքին կծու և սուր կողմը, բայց ուզելով իւր թագաւորական մեծվայելութիւնը ցուցընել՝ վարժապետէն բաժնուած ժամանակ՝ անորոջ կերպով մը պատիւ կամ պատուանըշան մը խոստացաւ իրեն ղրկել Լիզպոնայէն. բայց Ռոսսինի անուղղայ՝ իւր բարեկամին Գասդէլլանիի, որ այս արքայական տեսակցութեան ներկայ էր, նշան ըրաւ որ սենեկին մէկ անկիւնը դրուած ապակափեղկը բանայ. և ցուցընելով թագաւորին պատուանշանաց և գոյնզգոյն ժապաւինաց բազմութիւնն՝ հասկըցուց թէ արդէն բաւական ունի. բայց որպէս զի բոլորովին ամարգութեամբ չի մերժէ Նորա արքունական բարեհաճութիւնը՝ պատուանշանի փոխան՝ Բորգոյի գինւոյ տակաւիկ մը խընդրեց:

Ռոսսինի բազմաթիւ մեծամեծաց հետ ունեցած այս ընտանութիւնն՝ և ոչ իսկ կը նշմարէր. իւր անկախ, հեզնասէր և կրակոտ բնաւորութեան կը հպատակէր: Իրիկուն մը Նարոլէոն Գ Օբէրային մէջ զայն թիկնաթոռի մը վրայ բազմած տեսնելով՝ արքունական օթեակը հրաւիրեց. Ռոսսինի ներս մտած ատեն դռնէն սկսաւ ներուճն խնդրել իւր ոչ ըստ պատշաճի հագուստին վրայ. բայց կայսրը նորա խօսքերն ընդմիջեց — Նըստեցէք, նստեցէք, ըսելով. մեզի նման թագաւորները այս տեսակ բաներու կարևորութիւն չեն տար:

Երբ իւր փառաց վրայ նախանձող և զինքը շողորթող վարժապետները կարենար կերպով մը ծաղրել՝ շատ կ'ուրախանար Ռոսսինի. օր մը բարեկամի մ'ընկերակցութեամբ բարիզեան ծառուղոյ մը մէջ շրջապայած ժամանակ՝ Մայէրպէրի հանդիպեցաւ. Հիշկլնոդներու հեղինակն ամենայն պատրաստականութեամբ և խնամք « բարեկամին » թանկագին առողջութիւնն

հարցուց. իսկ Ռոսսինի մտայոյզ և հառաչելով պատասխանեց թէ շատ լաւ չէր զգար. ծնգաց տկարութիւն և գլխու պտոյտ մը ստէպ զինքը շատ կը նեղէր. այն ատեն Մայէրպէր ջերմ սիրով սեղմելով նորա ձեռքերն՝ յանձնեց որ անկողին մտնէ որպէս զի այս թեթեւ անհանգստութիւնը շուտով անցնի. այսպէս բաժնուեցան ՚ի միմեանց. Ռոսսինիի ընկերակից՝ բարեկամն ապշեցաւ որ առողջութեան մասին բնաւ իրեն բան մը չէր Ըսած և ուզեց որ տուն դառնան. բայց նա խնդալով և թեք բարեկամին թեկն տալով պատասխանեց.

— Ես շատ աղէկ եմ. այսօրուան չափ դեռ աղէկ չեմ զգացած. բայց իմ հիւանդութիւնս այնքան հաճոյք կը պատճառէ խեղճ Մայէրպէրի:

* *

Յովակիմ Ռոսսինիի երաժշտութիւնը՝ մասամբ մարդկային բընաւորութիւնը կը յայտնէ. այն հանդիսաւոր և ուրախական կերպը. կամ մանաւանդ իւր ամէն զուարթ նուագախաղերու մէջ արտայայտած ծաղրական և կատակալից ոճը՝ զոր կատարելութեան ծայրն հասուցեր է Պարպիէրի մէջ. այն գողտը և ականջաց ախորժալուր և գիւրըմբռնելի ոճը՝ որ Ռոսսինիի միայն յատուկ է և նորա երաժշտութիւնն անցեալ կամ ներկայ ամէն երաժշտութիւններէ կը զատէ՝ ճիշդ իւր ուրախ և զուարթ կենաց պատկերը կամ հայելին է. Գործոցը մէջ իւր միայք քիչ յոգնեցընողներն եղած են. Պարպիէր, Չէնէրէնթոյա, Կրամս շառլա, իրալիանա ին Ալմէրի, Մաքիլտէ տի Սապրաւ, և Կունսն Օրի. ամէնն ալ մի մի գլուխ գործոց ներշնչեալ ներդաշնակութեան, անզուգական շնորհաց և վայելչութեան. բայց ամէնն ալ կարծես թափուած տասնուվեց, տասուիրեք, և ինն աւուրց մէջ: Մոզէի հանդիսաւոր վեսնութիւնը, Սեմիլաւ միտի մեծութիւնը և յիրաւի բարբարոսական փայլը, և Գուշիէլ թէլի գիւցազնական մեծանձնութիւնն ալ շատ չյոգնեցուցին այս մեծ մարդը. բայց երեակայութեան մէջ՝ յամրագոյն և խոհագոյն կերպով կերպարանաւորեցան և գղնաւորեցան. վասն զի ոչ եթէ իրեն յատուկ կատակասէր ծանօթ և ծիծաղկոտ բնաւորութենէն բղխեցին՝ այլ կաթիլ կաթիլ ծորեց զանոնք իւր մեծ հանճարը, վերը յիշած Մածձաթինթիի նամակաց հաւաքածուին մէջ՝ Ռոսսինիի մի նամակն ալ կայ 1829ին (Գուշիէլ թէլի տարին) գրուած և ուղղեալ առ Կաթիլանո Գոնգի ՚ի Պոլոնիա: Այսպէս կը գրէ. «Իմ մեծ նուագախաղս, զոր դեռ չեմ լմնցուցած՝ գալ հոկտեմբերի պիտի ներկայացուի. այս

դժուար և երկար աշխատութիւնը գիւղին մէջ պիտի լմնցրնեմ. արդեօք յաջողութիւնը պիտի համապատասխանէ՞ այս գործին վրայ թափած աշխատանացս և խնամոցս» :

Վեց ամիս վրան աշխատեցաւ . յերուի զարմանալի՛ բան իւր բնաստրութեան համար . և Ակուատո մարքիզին ամառանոցին մէջ շարագրեց նուագախաղն , շատ անգամ չըջագայած և ձկնորսութիւն ըրած ժամանակը :

* *

Վերջը ի՞նչ հանդիպեցաւ . ճի՛շդ է արդեօք որ Գոռլիէլմ թէլի կիկլոպեան ստեղծագործութիւնն այնքան զահուրեցուց զինքը որ հրաժարեցաւ այնուհետև ի թատրոնէ , գրեթէ գրիչը ձգեց 37 տարուան երիտասարդ հասակին մէջ : Մոզար որ 35 տարեկան մեռաւ՝ հոգեվալքին ծրն իսկ կը շարագրէր . իսկ Յովակիմ Ռոսսինի՛ 76 տարուան վախճանեցաւ . գրեթէ քառասունը , ամենէն յարմար և զուարթ ժամանակը՝ զատարկ անցուց կամ ոչինչ բան ըրաւ . սակայն այս պարագութեան մէջ ալ դեռ իւր զարմանալի հանճարն երկու շանթ արձակեց , Սքասպար Մաքէրը և Պատարագը . առաջինն այո՛ , բայց երկրորդն իւր համբաւոյն վրայ բան մը չի յաւելուր :

Ռոսսինիի այս խորհրդաւոր և երկար լուծեան վրայ՝ շատերուն անծանօթ գէպք մը կը պատմուի . մի անգամ՝ Բարիդ գարձած ժամանակ Պրոնիայէ անցնելով՝ երիտասարդ և հարուստ երաժիշտ մը աղաչեց որ ներկայ գտնուի իւր մի նուագախաղին առաջին ներկայացման : Երաժշտութիւնն յերկինս բարձրացուցին և ժողովուրդը համակրանաց մեծ ցոյցեր ըրաւ առ հեղինակն . սա՛ ալ ներկայացման վերջերը գառնալով՝ առ Ռոսսինի՛ աչքի նշանով մ՛իւր կարծիքն հարցուց . նա ալ ուրախակցութեան ջերմ մաղթանքներ ուղղեց առ երիտասարդն իւր յաջողութեան և ընդունած ծափահարութեանց համար . այն ատեն պրոնիացին աւելի համարձակութեամբ՝ այլոց նման հարցուց թատրոնէ հրաժարելուն պատճառը . առ որ Ռոսսինի կանգ առնելով թատրոնին գրան առջև ուսկից ծափահարող հանդիսատեսք խուռն բազմութեամբ գուրս կ'ենէին , պատասխանեց ժողովուրդը ցուցնելով .

— Ի՞նչ կ'ուզես որ գրեմ այսպիսի բազմութեան մը համար :

Իսկ ուրիշ բարեկամի մը՝ մահուընէն քիչ յառաջ տարբեր կերպով խօսեր էր .

— Մինչև որ եղանակներն և ներդաշնակութիւնք զիս փընտուեցին՝ թատրոնի համար գրեցի . իսկ այժմ՝ երբ ես պիտի եր-

Թայի զանոնք փնտուելու, 'ի բաց Թողուցի. ես բնաւորութեամբ ըստ այսպէս ծոյլ եմ:

* * *

Այս տարօրինակ և եզակիան դէպքին պատճառն ինչ ալ ըլլայ՝ իւր ընդարձակ գործը՝ ամբողջ դար մը կրնայ փառաւորել և թերևս կ'աւելնայ դեռ. ամէն արուեստէ աւելի շուտ՝ երաժշտութիւնն 'ի մուտս կը խոնարհի և կ'աներևութանայ. թերևս միւսներուն տեղ տալու համար. զի մնացեալ գեղարուեստը այսօր քան դիւրըմբռնելի և հանրամատչելի չեն. ձայնից արուեստն՝ մարդկային ձայնին նման՝ այն նիւթական գործարանին պէտք ունի, զոր ունկն կը կոչենք. բայց ինչպէս ձայնն փախստական է, և նորա արձագանքն անխուսափելի կերպով կը կորսուի ընդարձակ միջոցին մէջ՝ այսպէս նաև երաժշտութիւնն՝ իւր ծրնունդը տեսնող սերունդը անցնելէն վերջը՝ կը կորսնցընէ իւր բնածին և բնագործմ նորութեան և գեղեցկութեան բոյրն և տիպարն:

Սակայն Ռոսսինի թէ՛ իր անձին և թէ՛ արուեստին համար պղնձեայ այնպիսի յիշատակարան մը կանգնեց՝ որ ամէն մըրըկաց, խարդաւանաց և յափշտակութեանց պիտի կարենայ ընդգիմանալ: Անջինջ և յատուկ բնագործմներ ունի ռոսսինեան երաժշտութիւնը. զի մարդկային զգացումներն և կիրքերն ճարտար և բնական վրձինով կը նկարէ. և ինչպէս Տանգէ 'ի քերդութեան, Շէքսպիր յողբերգութեան, Մանցոնի 'ի վիպասանութեան՝ այսպէս և Ռոսսինի յերաժշտութեան՝ մարդկային հանճարոյն թոյլ տրուած կատարելութեան յետին կէտն հասաւ. ոճը կրնայ փոխուիլ, գործիական մասը՝ նորանոր կըտորներով կրնայ հարստանալ. բայց այն գեղեցիկ և յանկուցիչ շեշտը՝ որ ռոսսինեան երգոց և ներգաշնակութեանց մէջ միշտ կը փայլի՝ միշտ նոյն պիպի մնայ անզուգապէս: